

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2019 թվականի N ____-Ա

ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.2 հատուկ (օժանդակ) դպրոց» (պետական գրանցման համարը՝ 273.210.03500), «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց» (պետական գրանցման համարը՝ 282.210.04696), «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ կրթահամալիր» (պետական գրանցման համարը՝ 264.210.06269) և «Երևանի հ.12 հատուկ դպրոց» (պետական գրանցման համարը՝ 273.210.03473) պետական ոչ առևտրային կազմակերպությունները համապատասխանաբար վերանվանել «Երևանի N1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Երևանի N2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Երևանի N3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Երևանի N4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ (այսուհետ՝ կազմակերպություններ):

2. Սահմանել, որ կազմակերպություններն երկրորդ՝ տարածքային մակարդակում երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպություններ են, որոնց՝

1) նպատակը իրենց սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է.

2) գործունեության առարկան կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումն է:

3. Թույլատրել կազմակերպություններին իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) ուսումնական և մեթոդական գրականության մշակում և հրատարակում.

2) դիդակտիկ նյութերի և պարագաների ստեղծում.

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում՝ 18-ից բարձր տարիք ունեցող (հանրակրթության մեջ չընդգրկված) անձանց.

4) փորձագետ-մասնագետների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում:

4. «Երևանի N1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Երևանի N2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Երևանի N3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Երևանի N4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» կետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո համատեղ ապահովել.

1) «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.2 հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ կրթահամալիր» և «Երևանի հ.12 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սովորողների՝ հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառությունը .

2) երկամսյա ժամկետում՝ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.2 հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ կրթահամալիր» և «Երևանի հ.12 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը և գույքի հանձնմանը նդունման աշխատանքների կատարումը.

6. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում հաստատել կազմակերպությունների կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

7. Կազմակերպությունների անվանափոխության հետ կապված պետական գրանցման և կնիքի ձեռքբերման ծախսերը կատարել կազմակերպությունների միջոցների հաշվին:

8. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 7-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո, եռամսյա ժամկետում, «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.2 հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Երևանի հ.12 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել համապատասխանաբար. 24.07.2017թ. կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 80/0017, 06.03.2012թ. N 12/0012 և 07.05.2018 թ. N 8106/0018 կնքված անշարժ գույքի պայմանագրերում սույն որոշման 1-ին կետում նշված անվանափոխման մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն ենթակա են իրականացման «Երևանի N1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», Երևանի N2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Երևանի N4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

««Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:

Օրենքով ամրագրվել է, որ հատուկ դպրոցները, պետք է վերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք աջակցություն կտրամադրեն

հանրակրթական դպրոցներին, կազմակերպելու համար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը:

Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, որպես երկրորդ մակարդակ, պետք է մատուցեն անձի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական ծառայություններ (կազմակերպում, համակարգում) և իրականացնեն անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշման համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլան և ժամանակացույց 18-րդ կետի համաձայն նախատեսվում է 2019 թվականի ընթացքում Երևան քաղաքում առնվազը 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում: «Երևանի N1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Երևանի N2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Երևանի N3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Երևանի N4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները հիմնադրվում են «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.2 հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ կրթահամալիր» և «Երևանի հ.12 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու միջոցով: Երևան քաղաքի հատուկ դպրոցներից սովորողների տեղափոխում հանրակրթական դպրոցներ, իսկ ներառական կրթական համակարգում չներառված երեխաների հետագա

կրթությունը ապահովվելու է ՀՀ տարածքում գործող հատուկ դպրոցներում (ծնողի ընտրությամբ):

3. Ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունման արդյունքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրմամբ նախատեսվում է համընդհանուր ներառական կրթության, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդնում, ինչը կնպաստի կրթության ոլորտում սահմանված նպատակների իրականացմանը, մասնավորապես կապահովի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

«Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների դիտողությունների և առաջարկությունների մասին

N/N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2019-05-27 N01/8-3/8595-2019</p>	<p>Առաջարկում է 1. խմբագրել Նախագծի 8-րդ կետը՝ «Երևանի N2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» բառերից առաջ ավելացնելով «Երևանի N1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» բառերը: 2. ՀՀ կառավարության 26.12.2002թ. N2179-Ն որոշման 2-րդ հավելվածում ուժը կորցրած ճանաչել «Երևան քաղաք» բաժնի 2-րդ, 3-րդ, 5-րդ կետերը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության դպրոցներ» բաժնի 3-րդ կետը:</p>	<p>1.Ընդունվել է 2.Ընդունվել է մասնակի</p>	<p>1.Որոշման նախագծի 8-րդ կետը առաջարկին համապատասխան խմբագրվել է: 2.Հայաստանի Հանրապետության քոլեր մարզերում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է սահմանված կարգով/իրավական ակտով/ ունենալ նախարարության ենթակայության կենտրոնների վերաբերյալ համապատասխան ցանկ, որ մեջ կներառվի դրույթը ՀՀ կառավարության 26.12.2002թ. N2179-Ն որոշման 2-րդ հավելվածում</p>

				<p>համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:</p>
<p>2.</p>	<p>Պետական գույքի կառավարման կոմիտե 2019-06-10 01/22.22/3973-19</p>	<p>Առաջարկում է Նախագծի նախաբանից հանել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին կատարված հղումը, իսկ Նախագծի 8-րդ կետում ավելացնել «Երևանի N1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի անվանումը:</p> <p>Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի հետ անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր կնքված չէ, իսկ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.2</p>	<p>1.Չի ընդունվում</p> <p>2. Ընդունվել է</p>	<p>Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պետական կազմակերպության հիմնադիրի բացառիկ լիազորությունները , սույն որոշմաման նախագծի 4-րդ կետի մի մասը տրվում է լիզոր պետական մարմնին, ինչը հիմք է հանդիսանում նախաբանում հղում կատարել նշված օրենքի համապատասխան հոդվածին:</p> <p>2.Որոշման նախագծի 8-րդ կետում կատարվել է լրացում: Առաջարկին համապատասխան լրացվել է անհատույց օգտագործման իրավունքով կնքված</p>

		<p>հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոց», «Երևանի հ.12 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքվել են համապատասխանաբար 24.07.2017թ. թիվ 80/0017, 06.03.2012թ. թիվ 12/0012 և 07.05.2018թ. թիվ 106/0018 անհատույց օգտագործման պայմանագրեր:</p>		<p>պայմանագրերի տարեթվերը և համաները,ինչ վերաբերվում է «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ին ամրացված ք.Երևան,Ծարավ Աղբյուրի 14 հասցեում գտնվող անշարժ գույքին , ապա հարցը կկարգավորվի ՀՀ կառավարության 26.01.2006թ. հ. 346 որոշմամբ:</p>
<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 2019-06-04 01/15.1/5313-19</p>		<p>Առաջարկում է 1.որոշման նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետը և 6-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությունը հանել, քանի որ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <<գ>>, <<դ>>, <<ե>> և <<է>> կետերով սահմանված լիազորությունները որոշման նախագծի 4-րդ կետով վերապահվում են ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:</p>	<p>1.Չի ընդունվում</p>	<p>1.Որոշման նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետը և 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված գործընթացը վերաբերվում է սովյալ դպրոցներում սովորողների հետագա ուսումը ծնողների համաձայնությաբ այլ դպրոցներում իրականացնելու</p>

		<p>Միաժամանակ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 1996 թվականի հունիսի 20-ի «Երևանի քաղաքային ենթակայության ձեռնարկությունների և կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 191 որոշման մեջ:</p>	<p>2.2ի ընդունվում</p>	<p>ն/ քանի որ հիմնական դպրոցների գործում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ, իսկ ինչ վերաբերվում է նախագծի 4-րդ կետի լիազորությունների մասին ապահովվելու վերաբերվում է միայն կենտրոնների գործունեության կազմակերպմանը, այլ ոչ թե սովորողների ուսումնառությանը:</p> <p>2.Առաջարկվող որոշման ցուցակում նշված ուսումնական հաստատությունների կազմափրավական կարգավիճակները համաձայն 1998 թ. մայիսին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և 2002 թ. ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>
--	--	---	------------------------	--

			<p> նների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի փոխվել է՝ հիմնարկից վերակազմակերպ վել են պետական ոչ առևտրային կազմակերպությու նների: Ուստի նշված Երևանի քաղաքապետար անի ենթակայության ուսումնական հաստատությունե րի ենթակայության փոփոխման հարցին կանրադառնանք Հայաստանի Հանրապետությա ն բոլեր մարզերում տարածքային մանկավարժահոգ եքանական աջակցության կենտրոնների հիմնադրման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է սահմանված կարգով/իրավակ ան ակտով/ ունենալ նախարարության ենթակայության կենտրոնների վերաբերյալ համապատասխան ցանկ, որ մեջ կներառվի դրույթ I ՀՀ կառավարության </p>
--	--	--	---

				26.12.2002թ. N2179-Ն որոշման 2-րդ հավելվածում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:
3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2019թ.-05-23 ԶԲ/8232-19	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
4.	Երևանի քաղաքապետարան 2019-05-23 01/7-43675h	Առաջարկում է 1.Որոշման նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետը և 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը հանել, քանի որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» կետերով սահմանված լիազորությունները որոշման նախագծի 4-րդ կետով վերապահվում են ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:	1.2ի ընդունվում	1.Որոշման նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետը և 6- րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունու մ նշված գործընթացը վերաբերվում է տվյալ դպրոցներում սովորողների հետագա ուսումը ծնողների համաձայնությա բ այլ դպրոցներում իրականացնելու ն/ քանի որ հիմնական դպրոցների գործում են Երևանի քաղաքապետար անի ենթակայությանը , իսկ ինչ

		<p>2. Միժամանակ, անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 1996 թվականի հունիսի 20-ի «Երևանի քաղաքային ենթակայության ձեռնարկությունների և կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N191 որոշման մեջ:</p>	<p>2.2ի ընդունվում</p>	<p>վերաբերվում է նախագծի 4-րդ կետի լիազորությունների մասին ապահովվում է միայն կենտրոնների գործունեության կազմակերպմանը, այլ ոչ թե սովորողների ուսումնառությանը: 2.Առաջարկվող որոշման ցուցակում նշված ուսումնական հաստատությունների կազմափոխական կարգավիճակները համաձայն 1998 թ. մայիսի ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և 2002 թ. ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի փոխվել է՝ հիմնարկից վերակազմակերպվել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների: Ուստի</p>
--	--	---	------------------------	---

			<p>նշված Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխման հարցին կանրադառնանք Հայաստանի Հանրապետության քուլտուրա մարզերում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրման աշխատանքների ավարտից հետո: Նախատեսվում է սահմանված կարգով /իրավական ակտով/ ունենալ նախարարության ենթակայության կենտրոնների վերաբերյալ համապատասխան ցանկ, որ մեջ կներառվի դրույթ << կառավարության 26.12.2002թ. N2179-Ն որոշման 2-րդ հավելվածում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:</p>
--	--	--	---

